

ԱՄՍԷ-ԱՄԻՍ

ՖԻՐԱՆՍԱ

ՇԱՐԼ ՌԻՇԷԻ 40 ԱՄԵԱԿԷ. — Մա-
յիս 22-ին Ֆրանսական բժշկական Ակա-
դեմիան՝ նախագահութեամբ Հռչակաւոր
ժաթեմաթիկոս Բէնլըվէի, տօնեց Շ.
Ռիշէի յորեւեանը:

Ֆրանսական կենսաբանական ընկե-
րութեան կողմէ խօսեցաւ Գ. Հիէկիյ,
Բժշկական Համալսարանի նախագահը
(doyen) Բթօ!։ Ռօթէ, որ ներկայիս
բժշկական աշխարհի մէջ Շ. Ռիշէի
յաջորդը կը հանդիսանայ, «կենսաբա-
նութեան ուսուցչապետ և մարդկային
մաթի փարոսներէն մէկը» անուանեց
դայն: Բթօ! տը Ֆրանսի կողմէն Գ.
հլէյ իր ճառին մէջ ըսաւ. «բոլոր մու-
սաները բոլորուած էին ձեր օրօրոցի
չուրը, բայց դուք բոլորին նախընտրե-
ցիք գիտութիւնը, և այդ ասպարէզի
մէջ ըրիք այն երկու խոշոր գիտերը —
չիճաբուսութիւնը և Ամաֆիլաֆսիմ —
որի համար այսօր ձեզ կը տօնէ Բժ.
Ակադեմիան և ամբողջ գիտական աշ-
խարհը, առանց հաշուելու այն բազմա-
թիւ ուրիշ հետազոտութիւնները որոնց
ամբողջութիւնը ձեր դործունէութեան
գեղեցկագոյն պսակը կը կազմէ և որոնք
ձեզ լավուազիի, Մաթէնդայի, Գլօտ
Պէրնարի, Մարէյի և Շովէնի դասին
կ'արժանացնեն»:

Բաղամթիւ օտար գիտնականներ
ուղերձներ կարդացին: Անոնց թուին
Տօքթ. Թորդոմեան՝ Հայ բժշկական
դասին կողմէն իր շնորհաւորութիւնները
ներկայացուց, և շեշտելով թէ յորեւեա-
րը միշտ հայկական դատի ջերմ պաշտ-
պանը եղած է և ներկայիս ալ Հայ
Ուսանողական Միութեան պաշտպանը և
պատուակալ նախագահն է, ամբողջ
հայութեան կողմէ իր խորին երախտըը
յայտնեց:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱԼԱՐԻԱՆ ՌՈՒՍԱՍԱՆԻ ԵՒ ՀԱ-
ՅԱՍՏԱՆԻ Մէջ. — Մոսկուայի Տրոպե-
քական Խառարանական Հանդէսի 1926ի
առաջին թիւին մէջ Բժ. Տօպրէյցէր կը
հրատարակէ ուշադրաւ ուսումնասիրու-
թիւն մը, որմէ կը քաղենք հետեւեալ
տեղեկութիւնները. —

1925-ին, ամբողջ Ս. Ս. Միութեան
մէջ արձանագրուած են 4,242,070 մա-
լարիայի դէպքեր, մինչ 1924-ին 5,228,
636 էր: Ընդհանրապէս հիւանդներու
թիւը պակսած է մօտ մէկ միլիօն, բայց
այդ նուազումը կը վերաբերի դիւխաւ-
րապէս բուն Ռուսաստանին, մինչդեռ
Բեյարուսիոյ և Կովկասի մէջ հիւան-
դութիւնը աւելցած է: Կովկասի հանրա-
պետութիւններուն մէջ միայն Վրաստանն
է որ նուազում կ'արձանագրէ, (1924-ին
— 82,842, իսկ 1925-ին — 60,906)
մինչդեռ Ատրպէճանի մէջ աւելցած է
(91,670-ի փոխարէն 98,828) նաև Հա-
յաստանի մէջ (53,569-ի փոխարէն
61,126):

Յաւելումը տեղի է ունեցած գլխա-
ւորապէս աշխնային ամիսներու մէջ,
ինչ որ անցեալի փորձերու համաձայն
կըստառնայ սաստկացնել հիւանդութեան
տարածումը, նոյն իսկ ներկայ 1926-ի
դարնան և ամառուան ընթացքին: Աշ-
նանային դէպքերու մէջ աւելի կը զարնեն
«Տրոպեքական» և չորսօրեայ (quaternaire)
ծանր ձեւերը, ինչ որ աւելի կը ծան-
րացնէ հեռանկարը:

ՀԱՀԱՏՏԵՆԴԻ ԴԷՄ ՄՂՈՒԱՆ ՊԱՅ-
ԲԱՐԸ զօրացնելու համար Հայաստանի
մէջ այս տարի կայաններու թիւը 20-ի
պիտի բարձրանայ: Արեւադարձային
կայաններու թիւը 11-ի:

Ճահճատենդի դէմ պայքարը զգալի
օգուտ տուած է. հիւանդացողներու
համեմատութիւնը իջած է 50-էն 26-ի: